ՆՊԱՏԱԿԸ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման կարգի (այսուհետ՝ Կարգ) նպատակն է սահմանել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների նախապատրաստման և անցկացման կարգը:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն կարգը կիրառվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի, խորհրդի, գլխավոր գործադիր տնօրենի, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալների և իրավաբանական վարչության կողմից:

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք	
«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք	
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրություն	
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կորպորատիվ կառավարման կանոնագիրք	

ԳԼՈՒԽ 1. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1.1. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով) նախապատրաստվում ու անցկացվում է ՀՀ օրենսդրության, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ կորպորատիվ կառավարման կանոնագրքի, սույն կարգի, Բանկի կանոնադրության և Ժողովի կողմից ընդունված այլ ակտերի համաձայն:

1.2. Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

1.3. Բանկը պարտավոր է տարին առնվազն մեկ անգամ գումարել բաժնետերերի տարեկան ժողով:

1.4. Ժողովը համարվում է իրավասու, եթե Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Բանկի բաժնետերերը, որոնք համատեղ տիրապետում են Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

1.5. Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

1.6. Արտահերթ Ժողովը գումարվում է Բանկի խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Բանկի գլխավոր գործադիր տնօրենի, նրա տեղակալների, գլխավոր հաշվապահի, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

1.7. Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ Բանկի խորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով: Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե սույն գլխի 1.6 կետում նշված պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին:

1.8. Ժողովի որոշումները կարող են ընդունվել առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով Բանկի բաժնետերերի համատեղ ներկա լինելու՝ հեռակա կարգով քվեարկության (այդ թվում՝ առցանց քվեարկության) միջոցով, բացառությամբ տարեկան ժողովի, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում հրավիրված արտահերթ ժողովի:

1.9. Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Բանկի քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

1.10. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է սույն կարգի 6-րդ գլխի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ, որոնք պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով Ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն բաժնետերերին Ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:

1.11. Ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել այնպիսի նիստով, որի ժամանակ ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի, ներառյալ՝ էլեկտրոնային փոստի, ծրագրային և հավելվածային հարթակների (այդ թվում՝ բջջային հավելվածների) միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Նման նիստը հեռակա կարգով անցկացված նիստ չի համարվում, իսկ այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված:

1.12. Ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվն ու կարգը, ինչպես նաև բաժնետերերին ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է Բանկի խորհուրդը՝ օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 2. ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

2.1. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն՝

ա) Բանկի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն իրենց պատկանող ձայների քանակով, ինչպես նաև անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող Բանկի մասնակիցների անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր.

բ) Բանկի արտոնյալ բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը իրենց պատկանող արտոնյալ բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով՝ օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև այդ բաժնետոմսերի անվանատերերը, եթե նրանք ներկայացնում են իրենց կողմից ներկայացվող բաժնետերերի անվանումները և նրանց պատկանող բաժնետոմսերի քանակը հիմնավորող փաստաթղթեր.

գ) Բանկի մասնակից չհանդիսացող խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

դ) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները՝ որպես դիտորդ.

ե) Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձը՝ որպես դիտորդ, եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի օրակարգի հարցերում.

զ) Կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ.

է) Բանկի կանոնադրությամբ նախատեսված այլ անձինք:

2.2. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմվում է խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ Բանկի մասնակիցների ռեեստրի տվյալների հիման վրա:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը պետք է միաժամանակ բավարարեն հետևյալ երկու պահանջները.

ա) այն չպետք է նախորդի ընդհանուր ժողով գումարելու մասին որոշումն ընդունելու օրվան,

բ) ցուցակը կազմելու օրվա և ընդհանուր ժողովի անցկացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի կարող 45 օրից ավելի լինել:

2.3. Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են Ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

ԳԼՈՒԽ 3. ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

3.1. Ժողովի նախապատրաստման ընթացքում խորհուրդը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում Ժողովը գումարող անձինք, որոշում են՝

ա) Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը, ձևը.

բ) Ժողովի օրակարգը.

գ) Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) Ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.

ե) Ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.

զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով, ինչպես նաև քվեաթերթիկները ներկայացնելու կարգը և ժամկետները:

3.2. Արտահերթ ժողովի՝ հեռակա կարգով քվեարկությամբ գումարման մասին խորհրդի որոշմամբ պետք է սահմանվեն՝

ա) քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը.

բ) Բանկի բաժնետերերին քվեաթերթիկները և բաժնետերերին տրամադրվող տեղեկությունները և նյութերը առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը.

գ) բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու վերջին ժամկետի տարին, ամիսը, ամսաթիվը:

ԳԼՈՒԽ 4. ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ

4.1. Ժողովի գումարման մասին բաժնետերերը պետք է ծանուցվեն Ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ:

4.2. Ծանուցումը, ինչպես նաև քվեաթերթիկների տրամադրումը պետք է իրականացվի ֆաքսի, պատվիրված նամակի ուղարկման կամ առձեռն հանձնելու կամ էլեկտրոնային կապի միջոցներով, ներառյալ՝ էլեկտրոնային փոստով, ծրագրային և հավելվածային հարթակներով (ներառյալ՝ բջջային հեռախոսների հավելվածներով), որոնք թույլ են տալիս հավաստիանալ հասցեատիրոջ կողմից դրանք ստանալու մասին:

4.3. Ժողովի գումարման մասին ծանուցումը պետք է պարունակի հետևյալ պարտադիր տվյալները՝

ա) Բանկի անվանումն ու գտնվելու վայրը.

բ) Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

գ) Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) Ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.

ե) Ժողովում քննարկվող հարցերին և նյութերին վերաբերող տեղեկություններին բաժնետերերի ծանոթանալու կարգը, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին Ժողովը նախապատրաստելու ընթացքում:

4.4. Տարեկան Ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը ներառում են՝

ա) Բանկի տարեկան հաշվետվությունը.

բ) տեղեկություններ խորհրդի առաջադրվող թեկնածուների մասին.

գ) կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ կանոնադրության նախագիծը նոր խմբագրությամբ.

դ) օրենքով և այլ իրավական ակտերով կարող են սահմանվել նաև բաժնետերերին՝ Ժողովը նախապատրաստելու ընթացքում ներկայացվելիք այլ տեղեկությունների լրացուցիչ ցանկ:

4.5. Ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ ուղարկվում են նաև սույն գլխի 4.4 կետով սահմանված տեղեկությունները և նյութերը:

4.6. Բանկն իր Ժողովի անցկացման մասին Կենտրոնական բանկին ծանուցում է դրա անցկացումից ոչ ուշ, քան 15 օր առաջ:

4.7. Բանկն իր տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարությունը հրապարակում է նվազագույնը 1 000 (հազար) տպաքանակ ունեցող զանգվածային լրատվության միջոցներով (պարբերական մամուլի) և Բանկի ինտերնետային տնային էջում, ժողովի օրվանից առնվազն 15 օր առաջ:

1.13. Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն բաժնետերերին ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:

ԳԼՈՒԽ 5. ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Բանկի բաժնետերը (բաժնետերերը), որը ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է հանդիսանում Բանկի ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում իրավունք ունի երկուսից ոչ ավել առաջարկություններ ներկայացնել Բանկի բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Բանկի խորհրդի անդամության թեկնածուներ: Առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված քանակը:

5.2. Բանկի բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ (բաժնետերերի) ազգանունը և անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի ձևերի և տեսակների:

5.3. Բանկի խորհրդի անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, նշվում է թեկնածուի անունը, նրա՝ Բանկի բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը, նրան պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը՝ ըստ ձևերի և տեսակների, նրան առաջադրող Բանկի բաժնետերերի ազգանունները և անունները (անվանումները), վերջիններիս պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը ըստ ձևերի և տեսակների:

5.4. Բանկի խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանց Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին սույն գլխի 5.1 կետով նշված ժամկետը լրանալուց 15 օրվա ընթացքում: Բանկի խորհուրդը կարող է որոշում ընդունել ներկայացված առաջարկները Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, եթե՝

ա) առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից խախտվել է սույն գլխի 5.1 կետով սահմանված ժամկետը.

բ) առաջարկ ներկայացրած բաժնետերը (բաժնետերերը) չի տնօրինում սույն գլխի 5.1 կետով սահմանված ձայնի իրավունք տվող Բանկի բաժնետոմսերին.

գ) լրիվ չեն կամ բացակայում են սույն գլխի 5.3 կետով սահմանված տվյալները.

դ) առաջարկը չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին:

5.5. Բանկի խորհրդի հիմնավորված որոշումը ներկայացված առաջարկը Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին ուղղվում է առաջարկը կամ թեկնածությունը ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերն) որոշումն ընդունելու պահից երեք օրվա ընթացքում:

5.6. Բանկի խորհրդի որոշումը ներկայացված առաջարկը ընկերության Բանկի տարեկան ընդհանուր ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին կարող է բողոքարկվել դատական կարգով:

ԳԼՈՒԽ 6. ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ

6.1. Հեռակա քվեարկությամբ ընդհանուր ժողով գումարելու պարագայում Բանկի ընդհանուր ժողովում քվեարկությունները կատարվում են քվեաթերթիկների միջոցով:

6.2. Քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը հաստատվում է խորհրդի որոշմամբ:

6.3. Քվեաթերթիկը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

ա) Բանկի անվանումը.

բ) ժողովի գումարման տարին, ամսաթիվը, ժամը և վայրը.

գ) քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը.

դ) քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակները՝ «կողմ», «դեմ», «ձեռնպահ»: Գումարային (կումուլյատիվ) քվեարկության անցկացման դեպքում քվեաթերթիկը պետք է նախատեսի քվեարկության կարգի առանձնահատկությունները.

ե) լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, եթե բաժնետերը քվեարկում է հեռակա կարգով.

զ) ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ (ներկայացուցչի) կողմից.

է) քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:

6.4. Խորհրդի ընտրության դեպքում քվեաթերթիկը պետք է թեկնածուների անունից բացի նրանց մասին պարունակի նաև անհատականացնող այլ տվյալներ:

ԳԼՈՒԽ 7. ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

7.1. Քվեաթերթիկների միջոցով քվեարկության դեպքում հաշվառվում են ձայներն այն հարցերի վերաբերյալ, որտեղ թողնված է քվեարկության միայն մեկ տարբերակ: Նշված պահանջի խախտմամբ լրացված քվեաթերթիկները համարվում են անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում:

7.2. Եթե քվեաթերթիկը բովանդակում է քվեարկության դրված մի քանի հարցեր, ապա սույն գլխի 7.1 կետում նշված պահանջի խախտումը մեկ կամ մի քանի հարցի նկատմամբ չի բերում ամբողջ քվեաթերթիկի անվավեր ճանաչմանը:

ԳԼՈՒԽ 8. ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Ժողովի արձանագրությունը կազմվում է հայերեն և անգլերեն լեզուներով, թղթային եղանակով՝ մեկ փաստաթուղթ պատրաստելու միջոցով, երկու բնօրինակից՝ ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում, որոնք ստորագրում են ժողովի նախագահը և Կորպորատիվ քարտուղարը, ով հանդիսանում է Ժողովի քարտուղարը:

8.2. Արձանագրության մեջ նշվում են՝

ա) արձանագրության հերթական համարը (համարանիշը).

բ) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

գ) Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը.

դ) ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը.

ե) ժողովի նախագահը (նախագահությունը) և քարտուղարը (քարտուղարությունը), ժողովի օրակարգը.

զ) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ Ժողովին մասնակցած բաժնետերերի և նիստին մասնակցող այլ անձանց կարծիքները.

է) նիստում ընդունված որոշումները:

8.3. Արձանագրությունները և որոշումները համարակալվում են եզակի համարանիշով: Ժողովի որոշման համարանիշը բաղկացած է Ժողովի արձանագրության հերթական համարից, որոշմանն առնչվող օրակարգային հարցի հերթական համարից, տվյալ օրակարգային հարցի շուրջ ընդունված որոշումների հերթական համարից:

8.4. Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը, որոնք և պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների ճշտության և հավաստիության համար:

8.5. Բանկի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ ժողովի արձանագրություններին:

8.6. Ժողովի օրակարգային հարցերի վերաբերյալ նյութերը (ներկայացումները, հաշվետվությունները և այլն) կազմվում են հայերեն և անգլերեն լեզուներով և հանդիսանում են տվյալ Ժողովի արձանագրության անբաժանելի մասը հանդիսացող հավելվածները: Ժողովի արձանագրությունները և հավելվածները գաղտնի են և հանդիսանում են սահմանափակ օգտագործման տեղեկություններ:

8.7. Ժողովի արձանագրությունները պահպանվում են թղթային եղանակով, իսկ հավելվածները՝ էլեկտրոնային եղանակով, դրա համար նախատեսված սահմանափակ հասանելիությամբ հատուկ թղթապանակում՝ Բանկի ֆայլային սերվերի վրա: Հավելվածների ֆայլերը պահպանվում են գաղտնագրված տեսքով:

8.8. Արձանագրությունների և հավելվածների պահպանության համար պատասխանատու է Կորպորատիվ քարտուղարը: Ընդ որում՝ հավելվածների ամբողջականությունն ու հավաստիությունն ապահովելու համար դրանք ստորագրվում են Կորպորատիվ քարտուղարի կողմից Բանկի կողմից վերջինիս տրամադրված էլեկտրոնային ստորագրությամբ:

ԳԼՈՒԽ 9. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մայիսի 13-ից:

9.2. Սույն կարգն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում Ժողովի 30.04.2021թ. հաստատած «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը: